



2024 թ. Երկու ծրագրերի համար իրավունակ հատուկ կարիքներ ունեցող անձանց համար նախատեսված ծրագրի Խնամքի մոդելի գնահատման արդյունքների ամփոփում

Ի՞նչ է Երկու ծրագրերի համար իրավունակ հատուկ կարիքներ ունեցող անձանց համար նախատեսված ծրագրի (D-SNP) Խնամքի մոդելը (MOC):

Dual Special Needs Plan-ի (D-SNP, Երկու ծրագրերի համար իրավունակ հատուկ կարիքներ ունեցող անձանց համար նախատեսված ծրագիր) Model of Care-ը (MOC, Խնամքի մոդել) նկարագրում է, թե ինչպես ենք մենք առողջապահական ծառայություններ տրամադրում մեր D-SNP-ի անդամներին: Մենք ցանկանում ենք տրամադրել ձեզ լավագույն խնամքը, որը հուսալի և հեշտ հասանելի է: Ամեն տարի մենք ստուգում ենք ձեզ տրամադրվող խնամքի և սպասարկման որակը: Մենք մեր առջև նպատակներ ենք դնում և ձեռնարկում քայլեր և գործողություններ, եթե չենք հասնում այդ նպատակներին:

Ահա, թե ինչպես ենք մենք ստուգում մեր ծառայությունների որակը՝

- Անդամների բավարարվածության հարցում
- Որքան մոտ են բժիշկները ձեր տանը
- Խնամքի համակարգում
- Խնամքի անցումային փուլեր
- Տեղեկատվություն ձեր բժիշկներից ստացվող խնամքի մասին՝ ձեզ առողջ պահելու համար
- Բժիշկների և անձնակազմի վերապատրաստում

Ի՞նչ է տեղի ունենում, եթե մենք չենք հասնում մեր նպատակներին:

Մենք գտնում ենք լավագույն հնարավոր միջոցները՝ մեր նպատակներին հասնելու համար: Մենք նոր ծրագրեր ենք մշակում, մինչև որ հասնենք մեր նպատակին:

Ի՞նչ արդյունքների ենք մենք հասել 2024 թվականին:

1. **Անդամների բավարարվածության հարցում.** մեր նպատակն է համոզվել, որ դուք գոհ եք, որ մեր առողջապահական ծրագրի անդամ եք:

Ամեն տարի մենք ձեզ հարցնում ենք ձեր բժիշկների և առողջապահական ծրագրի հետ ունեցած փորձառության մասին: Մենք ցանկանում ենք համոզվել, որ դուք գոհ եք այն խնամքից, որ ստանում եք: Մենք նաև ցանկանում ենք համոզվել, որ դուք լավագույն սպասարկումն եք ստանում առողջապահական ծրագրից:

Մենք չենք հասել մեր նպատակներին Խնամքի համակարգման, Առողջապահական ծրագրի հաճախորդների սպասարկման, Առողջապահական ծրագրի վարկանիշի, Առողջապահական խնամքի վարկանիշի, Արագ խնամք ստանալու և Անհրաժեշտ խնամք ստանալու հարցերում:

Մենք գիտենք, որ այս ծառայությունները կարևոր են ձեզ համար: Մենք կկենտրոնանանք բարելավման միջոցների վրա: Մենք ցանկանում ենք, որպեսզի դուք դրական փորձառություն ունենաք:

Մենք ցանկանում ենք լինել ձեր վստահելի առողջապահական ծրագիրը: Մենք լսում ենք ձեր ասածները հարցումների միջոցով: Մա ձեզ համար օգտակար փոփոխություններ կատարելու կարևոր միջոց է: Թիմն աշխատում է բարելավելու ձեր փորձառությունը՝ կապված առողջապահական ծրագրի հետ:

2. Որքան մոտ են բժիշկները ձեր տանը. մեր նպատակն է համոզվել, որ ձեզ հասանելի են ձեր տան մոտակայքում գտնվող բոլոր տեսակի բժիշկները:

Մենք հասանք մեր նպատակներին՝ ապահովելով, որ ունենք բավարար թվով առաջնային խնամքի բժիշկներ՝ ձեզ խնամք տրամադրելու համար: Մենք հասանք մեր նպատակներին՝ ապահովելով, որ ունենաք բավարար թվով մասնագիտացված խնամքի բժիշկներ ձեզ խնամք տրամադրելու համար: Խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ, եթե ձեր տարածքում բժիշկ չկա:

Մենք նաև համագործակցում ենք կազմակերպությունների հետ, որպեսզի օգնենք ձեզ փոխադրամիջոց գտնել՝ ձեր բժշկին այցելելու և վերադառնալու համար: Մենք հասանք մեր նպատակներին՝ օգնելով անդամներին փոխադրամիջոց գտնել:

3. Խնամքի համակարգում. մեր նպատակն է բարելավել ձեր առողջությունը խնամքի համակարգման միջոցով:

Մենք խնդրում ենք ձեզ լրացնել Health Risk Assessment-ը (HRA, Առողջության ռիսկերի գնահատում): HRA-ը ձեր առողջական կարիքների վերաբերյալ հարցերի ցանկ է: Մենք նաև դիմում ենք ձեզ Individualized Care Plan-ի (ICP, Անհատականացված խնամքի ծրագիր) հարցերով: ICP-ն ձեր առողջական կարիքները բավարարելու գործողությունների ծրագիր է: Վերջապես, մենք հրավիրում ենք ձեզ հանդիպել ձեր խնամքի թիմի հետ՝ ձեր առողջությունը բարելավելու տարբերակները քննարկելու համար:

Մենք չենք հասել HRA-ի (99.9%՝ սկզբնական, 96%՝ տարեկան), ICP-ի (99%) և խնամքի թիմի (99%) 100% նպատակներին: Այնուամենայնիվ, գործառնական փոփոխությունները բերեցին համապատասխանության մակարդակի բարելավմանը 2024 թվականին:

Մենք կշարունակենք գործառնական փոփոխություններ իրականացնել՝ ձեզ հետ կապ հաստատելու համար: Մեր նպատակն է կապ հաստատել անդամների 100%-ի հետ՝ HRA-ի, ICP-ի և խնամքի թիմի հանդիպման համար: Մենք կստեղծենք ICP և կանցկացնենք խնամքի թիմի հանդիպում ամեն անդամի համար (անկախ նրանից՝ անդամն ուզում է մասնակցել, թե ոչ):

Օգնեք մեզ բարելավել ձեր առողջությունը՝ զանգահարելով Խնամքի կառավարման բաժին՝ ձեր HRA-ը լրացնելու և խնամքի թիմի հանդիպմանը մասնակցելու համար,

որպեսզի խնամքի ծրագիր կազմեք ձեզ համար:

4. Խնամքի անցումային փուլեր. մեր նպատակն է բարելավել ձեր առողջությունը՝ առողջապահական միջավայրերի միջև խնամքի հստակ անցումային փուլերի միջոցով:

Մենք համագործակցում ենք հիվանդանոցների և skilled nursing facility-ների (SNF, մասնագիտական բուժքույրական հաստատություններ) հետ՝ անդամներին ժամանակին խնամք տրամադրելու համար: Մենք կատարում ենք հետևյալ միջոցառումները.

- Ձեր խնամքի կառավարիչը թարմացնում է ձեր ICP-ն խնամքի տարբերակի փոփոխությունից հետո 30 օրվա ընթացքում:
- Ձեր ICP-ն տրվում է ձեզ և ձեր առաջնային խնամքի բժշկին թարմացումից հետո 30 օրվա ընթացքում:
- Ձեր խնամքի կառավարիչը կապ է հաստատում ձեզ հետ՝ տուն դուրս գրվելու մասին ծանուցումից հետո 4 աշխատանքային օրվա ընթացքում՝ ձեր անցումային խնամքի կարիքների հետ կապված օգնություն առաջարկելու համար:

Մենք չենք հասել այս միջոցառումների նպատակներին: Սա ուղղելու համար մենք կհամագործակցենք մատակարարների հետ՝ դուրս գրվելու մասին տվյալները մեզ ավելի արագ ուղարկելու նպատակով: Մենք նաև կօգտագործենք նոր համակարգեր՝ դուրս գրվելու մասին տվյալներն ավելի արագ ստանալու համար: Սա կօգնի մեզ պահպանել ժամկետները:

5. Տեղեկատվություն ձեր բժիշկներից ստացվող խնամքի մասին՝ ձեզ առողջ պահելու համար. մեր նպատակն է բարելավել ձեր առողջությունը՝ ձեզ համար ապահովելով կանխարգելիչ առողջապահական ծառայությունների ստացումը:

Առողջապահական ծրագրերն օգտագործում են տեղեկատվությունը՝ պարզելու համար, թե որքան լավ են նրանք սպասարկում անդամներին: Մենք հասել ենք հետևյալ նպատակներին.

- Համոզվել, որ հիվանդանոցից դուրս գրված անդամները կրկին հիվանդանոց չեն պառկում 30 օրվա ընթացքում:

Մենք չենք հասել հետևյալ նպատակներին.

- Համոզվել, որ անդամների դեղորայքը վերանայվում է տարին առնվազն մեկ անգամ:
- Համոզվել, որ շաքարախտ ունեցող անդամները ստուգում են իրենց շաքարի մակարդակները:
- Համոզվել, որ անդամների դեղորայքը վերանայվում և թարմացվում է հիվանդանոցում մնալուց հետո:
- Համոզվել, որ անդամներն ամեն տարի անցնում են ցավի ստուգում:
- Համոզվել, որ հակադեպրեսանտների կարիք ունեցող անդամները սկսում և շարունակում են դեղորայքի ընդունումը:
- Համոզվել, որ բարձր արյան ճնշում ունեցող անդամները պահպանում են առողջ արյան ճնշում:
- Համոզվել, որ անդամների համար մատչելի են կանխարգելիչ խնամքի

ծառայությունները:

Մենք կխոսենք ձեր բժիշկների հետ այն մասին, որ ստանաք ձեզ անհրաժեշտ ծառայությունները՝ քրոնիկ (երկարատև) առողջական խնդիրները կանխելու նպատակով: Մենք նաև կօգտագործենք հեռախոսային կապից բացի այլ մեթոդներ՝ մեր առաջարկած ծրագրերի մասին ձեզ տեղեկացնելու համար: Մենք ցանկանում ենք համոզվել, որ դուք առողջ եք ամբողջ տարի:

Օգնեք մեզ պահպանել ձեր առողջությունը՝ ձեր առողջապահական գործողությունները կազմակերպելով հաջորդ տարվա սկզբին:

Մենք առաջարկում ենք Blue Shield of California Appreciation Program-ը (Blue Shield of California-ի Գնահատման ծրագիր), որտեղ դուք կարող եք պարգևատրվել առողջապահական գործողություններ իրականացնելու համար: Մանրամասների համար զանգահարեք **(866) 352-0892 (TTY՝ 711)** հեռախոսահամարով, ժամը 8 a.m.-ից 6 p.m.-ը, երկուշաբթիից ուրբաթ:

6. Բժիշկների և անձնակազմի վերապատրաստում. մեր նպատակն է ապահովել, որ բոլոր բժիշկները և անձնակազմի անդամները Խնամքի մոդելի հետ կապված վերապատրաստում անցնեն աշխատանքի ընդունվելուց հետո և ամեն տարի:

Բոլոր նոր բժիշկներին և անձնակազմին տեղեկացնում են վերապատրաստման գործընթացի և այն իրականացնելու իրենց պարտականության մասին: Նոր բժիշկներն ու անձնակազմի անդամները պետք է անցնեն վերապատրաստում աշխատանքի ընդունվելուց հետո 90 օրվա ընթացքում: Մենք ֆաքս և էլփոստ ենք օգտագործում՝ բժիշկներին և անձնակազմին վերապատրաստման մասին հիշեցնելու համար:

Բժիշկների համար մենք հասել ենք 80% վերապատրաստման մեր նպատակին՝ աշխատանքի ընդունվելիս (86%) և տարեկան վերապատրաստում (82%):

Անձնակազմի համար մենք չենք հասել 100% վերապատրաստման մեր նպատակին՝ աշխատանքի ընդունվելիս (99%): Նոր աշխատողների համար վերապատրաստման ժամկետները սխալ էին նշված տարվա սկզբին: Այս խնդիրը լուծվել է: Մենք հասել ենք 100% տարեկան վերապատրաստման մեր նպատակին: Թիմը կշարունակի օգտագործել հիշեցումների համակարգը՝ համոզվելու համար, որ բոլորն անցնում են վերապատրաստումը:

Ստացեք այս ծանուցման թղթային պատճենը՝ զանգահարելով Հաճախորդների սպասարկում **(800) 452-4413 (TTY՝ 711)** հեռխոսահամարով, ժամը 8 a.m.-ից 8 p.m.-ը, խաղաղօվկիանոսյան ժամանակով (PT), շաբաթը յոթ օր: Պատճենը ներբեռնելու համար այցելեք մեր կայքը՝ <https://www.blueshieldca.com/en/medicare/member-resources/plan-documents-dsnp> հասցեով:

Blue Shield of California is an independent member of the Blue Shield Association

Խտրականության բացառման մասին ծանուցում

The company complies with applicable state laws and federal civil rights laws and does not discriminate, exclude people, or treat them differently on the basis of race, color, national origin, ethnic group identification, medical condition, genetic information, ancestry, religion, sex, marital status, gender, gender identity, sexual orientation, age, mental disability, or physical disability. La compañía cumple con las leyes de derechos civiles federales y estatales aplicables, y no discrimina, ni excluye ni trata de manera diferente a las personas por su raza, color, país de origen, identificación con determinado grupo étnico, condición médica, información genética, ascendencia, religión, sexo, estado civil, género, identidad de género, orientación sexual, edad, ni discapacidad física ni mental. 本公司遵守適用的州法律和聯邦民權法律，並且不會以種族、膚色、原國籍、族群認同、醫療狀況、遺傳資訊、血統、宗教、性別、婚姻狀況、性別認同、性取向、年齡、精神殘疾或身體殘疾而進行歧視、排斥或區別對待他人。

Ընկերությունը հետևում է գործող նահանգային և քաղաքացիական իրավունքների պաշտպանության դաշնային օրենքներին և խտրականություն չի դնում, չի բացառում մարդկանց կամ այլ կերպ չի վերաբերվում նրանց ռասայի, մաշկի գույնի, ազգային ծագման, էթնիկ պատկանելության, առողջական վիճակի, գենետիկական տեղեկատվության, ծագման, կրոնի, սեռի, ամուսնական կարգավիճակի, գենդերի, գենդերային ինքնության, սեռական կողմնորոշման, տարիքի, հոգեկան խնդիրներ ունենալու կամ ֆիզիկական հաշմանդամության հիմքերով:

H2819_25_350A_C Accepted 07202025

A54331DSN-AM_0725